

"Միացեալ Նահանգները Հայոց ցեղասպանութեան փաստը ճանչնալու ճամփու վրայ է մինչ մենք տակաւին կը հերքենք"

Եա՛ագով Ախիմէի

29 Նոյեմբեր 2005ի Իսրայէլեան "Մա՛արրիվ" օրաթերթի "Մտքեր - Տեսակէտներ" սիւնակի մէջ, Իսրայէլի գլխաւոր Ռապի Եօնա Մէցկէրի Հայաստան այցելութեան առթիւ մեծ Հայասէր թղթակից Եա՛ագով Ախիմէի հանդէս կու գայ սոյն յօդուածով: Թարգմանութիւնը կատարեց "Հ.Մ.Ը.Մ. Ամպիոն"ի խմբագրութիւնը:

Այս օրերուն նախքան մեր խորհրդարանականների ցրումը կ'արժէ որ անոնք առաւել բան մը ընդօրինակեն իրենց Ամերիկացի գործակիցներէն (Գոնկրէսի - Սէնաթի) ներկայացուցիչներէն, որոնք Հայոց Ցեղասպանութիւնը ճանչնալու հարցով անգամ մը եւս լրջօրէն կը զբաղին եւ եթէ վերջին վայրկեանի անակնկալ փոփոխութիւն չի պատահի, Միացեալ Նահանգները շուտով ճանչնալու են Հայոց Ցեղասպանութիւնը, ինչ որ 16 ժողովրդավար ու քաղաքակրթեալ պետութիւններ արդէն որդեգրած են, մինչ մենք այն ժողովուրդի գաւակները, որուն թուին մէկ երրորդը այլ բայց բոլորի կողմէ ճանչցուած ցեղասպանութեան մը զոհ ենք գացած, տակաւին կը հերքենք Հայոց Ցեղասպանութեան փաստը:

Ինչպէս գիտէք Իսրայէլեան Իշխանութիւնները կը զգուշանան Թուրքիոյ հակազդեցութենէն, որովհետեւ այդ ցեղասպանութիւնը գործուած է 20րդ դարու սկիզբը Օսմանական Իշխանութեան օրօք եւ սահմաններու մէջ որուն որպէս արդիւնք 1.5 միլիոն Հայեր են բնաջնջուած:

Հակառակ անոր, որոշման պահուն, Ամերիկեան Գոնկրէսը իր նախագահին լեզուով պիտի նշէ Հայոց Ցեղասպանութեան գործադրման փաստն ու ճանաչումն առանց հաշուի առնելու ԱՄՆ-Թուրքիա յարաբերութեանց հաւանական տագնապը:

Ծիծղ է որ Միացեալ Նահանգները Իսրայէլ չէ, բայց Իսրայէլը Հրէից երկիրն է: Միայն մի քանի օրեր առաջ Իսրայէլի Խախամապէտ Ռապի Եօնա Մէցկէր Հայոց Ցեղասպանութեան յուշարձանի առաջ, Ծիծեռնակաբերդի բլուրի վրայ, Հայ նահատակաց ի յիշատակ աղօթք բարձրացուց:

Խախամապետի հետ վերոյիշեալ այցի գծով իր հետ իմ ունեցած խօսակցութեան ընթացքին Ռապին յաճախ ունեցաւ անդրադարձեր, որոնք կը վերաբերէին Հրէից Ողջակիզման:

Իմ յաջորդ հարցին թէ առդէօք Ծիծեռնակաբերդը որքանո՞վ քեզ յիշեցուց Հրէից Ողջակիզումը, Խախամապետը ըսաւ թէ այդ բոլոր նմոյշները, պատկերները, գիրքերը, իրերը անզգալաբար ու բնականաբար կը տանէին ինձ դէպի մեր ահաւոր փորձութիւնը, եւ ես իմ աղօթքէ ետք դարձայ իմ հիւրընկալներուն ու ըսի թէ գուցէ միայն մենք Հրեաներս կ'ըմբռնենք ու կ'ապրինք ձեր տառապանքը, այս բոլորը կը յիշեցնեն թէ ինչպէս ջարդեցին մեզ Հրեաներուս:

Իսրայէլը-Հայաստան խմբակցութեան նախագահ Իսրայէլի խորհրդարանական Եուրի Շթերն, որը ընկերակցած էր Խախամապետին, զեռյուզման պահեր էր անցուցած ցեղասպանութեան թանգարանի մէջ Խախամապետին տուած բացատրութեանց ընթացքին:

Արդարեւ, Խախամապետը քաղաքական դէմք չէ ու ան իր աղօթքէն թէ զգացական ապրումներն անդին Հայոց Տեղասպանութեան գծով Թուրքիոյ պատասխանատուութիւն վերցնելու կոչ չ'առաւ հակառակ որ Հայկական յաղորդումները այդպիսին արձագանգեցին: Բայց եւ այնպէս, Խախամապետի խօսքը թէ "Թուրքիան իր անցեալին հետ հաշուի է նստելու" շատ բան կ'ըսէր:



*Իսրայէլի գլխաւոր Ռապի Եօնա Մէցկեր Վեհափառ Հօր կողքին
Ծիծեռնակաբերդի մուտքի պահուն:*

Վերջապէս, Խախամապետը Մէցկեր Նախընտրեց բաւականանալ զգացական զօրակցական մօտեցումներով ու խուսափեցաւ Եւրոպայի Խորհրդարանի նման պահանջքէ, որը կը հրահանգէ Թուրքիոյ ճամջնալ Հայոց Տեղասպանութիւնը ու ապա տողանցել դէպի Եւրոպական Միութիւն:

Արդ, Հայեր, անգամ մը եւս յուսախափ Հրէից պետութենէն, որը թեռ եւս լռութեամբ կը դիմաւորէ ամէն զարգացում Հայոց Տեղասպանութեան ճանաչման նկատմամբ, կու գան հարցանդելու թէ ինչու Երուսաղէմը կ'ուշանայ, ինչի՞ կը սպասէ Երուսաղէմը երբ երկու տասնեակ պետութիւն թէ Խորհրդարան կը ճանչնան այդ փաստը, ինչո՞ւ կը տատամսի Երուսաղէմը: Առդեօք Ամերիկայի կողմէ Քուպայի սահմանուած պատճառիչոցներու նման յա՞րկ է կեցուածք ցուցաբերել: Առդօք ցեղասպանութեան մը մասին չէ՞ որ կը խօսուի, նման այն ցեղասպանութեան, որուն ի յիշատակ ՄԱԿը տիեզերական ոգեկոչման օր հրչակեց եւ որու յայտարարման պահուն ՄԱԿի մօտ Իսրայէլի ներկայացուցիչ Տանի Կիլըրման "Փառք Ամենակալին որ մեզ կեանք պարգեւեց" ըստ իս անհամ ու անտեղի աղօթքը բարձրացուց:

Իսրայէլեան Խորհրդարանի մէջ Հայոց Տեղասպանութեան ճանաչման հարցը այն հազուագիւտ զօրանոցներէն մին է ուր քաղաքական հակադիր հոսանքներու պարագլուխները կը միանան ինչպէս ծայրայեղ ձախ Հայաստր Եօսի Սարիտը ու ծայրայեղ աջ Եւրի Շթերնը:

Ըստ սովորութեան եւ ի յարգանս նահատակաց Ծիծեռնակաբերդի յուշարձանի առաջ պետական դէմքեր-դեկաւարներ իրենց անուան ծառ կը տնկեն: Առաջարկուեցաւ Խախամապետ Ռապի Եօնա Մէցկերին նոյն պատիւը հակառակ որ ան որեւէ քաղաքական հանգամանք չի վայելէր:

Ծառատնկման պահուն Խախամապետ Մէցկեր հարց է ուղղած շուրջիններուն աւելի ինքզինքին թէ "քաղաքական դէմքեր սա ծառատնկման պահուն արդեօք ի՞նչ են զգացել չ'գիտեն, բայց գիտեն որ այս պահուն ես կու լամ, մենք կու լանք":

Այնուհետև, արդեօք այս բոլորից ետք տեղին չէ՞ր որ Եօնա Մեցկեր տուն վերադարձին ծայն բարձրացներ ու կոչ ուղղեր իր երկրի քաղաքական ղեկավարներուն որ Հայոց Ցեղասպանութեան նկատմամբ այլեւս իրենց խղճի պարտքը բերեն, հակառակ անոր, որ գիտենք թէ այդ ղեկավարները խուլ պիտի ծեւանային: Այնուհետև, Մեցկերի կոչը ծայն բարբարոյ յանապատի չի կրնար մնալ եւ իր տեղին իր կշիռը պիտի ունենար:



*Իսրայէլի Գլխաւոր Ռապի Եօնա Մեցկեր (նկարի կեդրոնը) ծաղիկ կը գետնդէ
Ծիծերնակաբերդի մշտնջենական կրակի շուրջ: Ձախէն առաջինը՝
Իսրայէլի Խորհրդարանի անդամ Եուրի Շթերն:*